«Ռիտուալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոց թիվ 14 հասցեում նախատեսվող գերեզմանատան կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ 4-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

07.05.2021թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2021 թվականի մայիսի 4-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցավ «Ռիտուալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոց թիվ 14 հասցեում նախատեսվող գերեզմանատան կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ 4-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, «Ռիտուալ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Քոչարյանը, Վեոլիա Ջուր ՓԲԸ «Կապան» տեղամասի պետ՝ Հ. Գևորգյանը, «Էդ-Սյուն» ՍՊԸ տնօրեն՝ Արմենակ Սիմոնյանը, ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դասախոս՝ Լ. Պետրոսյանը, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը:

Խոսք (Գ. Թադևոսյան)

Հարգելի՛ գործընկերներ, այսօր՝ 2021 թվականի մայիսի 4-ին, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի, սահմանված կարգով տեղի է ունենում «Ռիտուալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոց թիվ 14 հասցեում նախատեսվող գերեզմանատան կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ 4-րդ հանրային քննարկումը: Հանրային քննարկման վերաբերյալ նախօրոք ծանուցվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի ապրիլի 21-ի թիվ 70 համարում, ինչպես նաև ՀՀ շրջակա մջավայրի նախարարության և Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքերի (www.mnp.am, www.kapan.am) հայտարարությունների բաժնում:

Նախագիծը վերաբերվում է «Ռիտուալ» ՍՊ ընկերության սեփականության իրավունքով պատկանող տարածքում գերեզմանատան կազմակերպման աշխատանքներին:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց ՀՀ շրջակա՛ միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանին :

Զեկույց (Հովիկ Մեսրոպյան)

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոն հայտ է ներկայացվել «Ռիտուալ» ՍՊԸ-ի կողմից Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ

փողոց թիվ 14 հասցեում նախատեսվող գերեզմանատան կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ: Համայնքը նախապես տվել է իր իր համաձայնությունը տվյալ տարածքում գերեզմանատան կառուցման աշխատանքներ իրականացնելու համար: Նախագիծը ներկայացվել է համայնքապետարան՝ մանրամասն իր բոլոր լուծումներով 1-ին, 2-րդ, 3-րդ հանրային քննարկումների ժամանակ: Այժմ 4-րդ քննարկումն է, որը նվիրված է եզրակացությանը: Այս փուլից հետո, օրենքին համապատասխան, տրվելու է փորձաքննական պետական եզրակացություն, որի հիման վրա էլ ընկերությունը կարող է հետագայում իրագործել տվյալ աշխատանքները: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները, առողջապահության, կրթության, գիտության և մշակույթի, պաշտպանության, արտակարգ իրավիճակների նախարարությունները: Ստացված կարծիքների և դիտողությունների հիման վրա հայտը լրամշակվել և ներկայացվել է փորձաքննական կենտրոն: Բնապահպանական մասով՝ տվյալ տարածքում Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան: Տվյալ տարածքը հատուկ պահպանվող տարածք չէ, հուշարձաններ չկան: Ցանկացած գործունեություն իրականացնելիս՝ շրջակա միջավայրի վրա որոշակի բացասական ազդեցություն լինում է, սակայն հաշվետվությունում մշակվել են բնապահպանական միջոցառումներ, որոնք կմեղմացնեն բնապահպանական ազդեցությունները, ռիսկերը գրեթե կզրոյացվեն: Շինարարական աշխատանքների, հողային աշխատանքների ժամանակ փոշեառաջացումը կանխելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել ջրցան, նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձր թաղանթով, պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը ու իրականացնել կարգավորում: Իսկ ջրային ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանա մակերևույթային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 120 մ^3 հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն որոշմամբ: Հողի բերրի շերտը կհանվի և կպահպանվի ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով աղտոտումը, որակական հատկանիշների վատթարացումը: Մաքուր հողը, որը կհանվի, դա կհամաձայնեցվի համայնքապետարանի հետ և հետագա աշխատանքները կիրականացվեն նրա հսկողությամբ: Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսների վրա: Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է, որ այդ տարածքում սարքավորումների և մեքենաների տեխնիկական վիճակը ապահովված լինի: Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ՏԻՄ-ի կողմից հատկացված հատուկ վայր: Շինարարական աղբը հաշվարկվել է 10 տ քանակով, որը ևս կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված հատուկ վայր:

Ըստ հաշվետվության նորմերը պահպանված են, սանիտարապաշտպանիչ գոտին՝ 300 մետրը պաշտպանված է: Այն ծառատունկը, որ անում են սանիտարապաշտպանիչ գոտին պաշտպանելու համար, դա վերաբերվում է այն գերեզմանատներին, որ այդ 300 մետրը չունեն, այսինքն, երբ բնակավայրից 10, 20, 30 մ հեռավորությունը պահպանված չէ:

«Ռիտուալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված է նաև սոցիալական աջակցության միջոցառումներ՝ համաձայնեցնելով համայնքապետարանի հետ:

Խոսք (Գ. Թադևոսյան)

Այսօր գերեզմանատան հարցը իսկապես խնդրահարույց է: Կապան քաղաքում ունենք 2 գերեզմանատուն, որից 1-ը՝ փակ, մյուսը՝ փակման եզրին: Մասնավոր գերեզմանատների գործունեությունը այս առումով կարևոր է: Համայնքը որևէ նոր տարածք չի տրամադրում, «Ռիտուալ» ՍՊԸ սեփականության իրավունքով պատկանող 3.7 հա հողամասի 1 հեկտարի կտրվածքով նախատեսում է իրականացնել այս նախագիծը: Ծառատնկման հարցով, կառաջարկեի քննարկել համայնքապետարանի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ: Կառաջարկեի ուշադրություն դարձնել նաև նրան, որ շրջանառվում է օրենքի նախագիծ՝ հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, դիակիզարանների շահագործման մասին: Քանի որ ընկերությունը նույնիսկ հստակ չափեր է նախատեսել (3×4), կխնդրեի հետևել, որ գերեզմատունը աշխատի համաձայն այս օրենքի:

Կարծիք (Լեոնիկ Պետրոսյան)

Ինչպես համայնքի ղեկավարի տեղակալը նշեց, Կապան համայնքում այս խնդիրը շատ արդիական է: Ինչ էլ, որ արվի այս էտապում կարծում եմ, որ դա բավականին օգնություն կլինի: Այս նոր գերեզմանատան բանապահպանական չափանիշների պահպանումը շատ ավելի լավ վիճակում է, քան հին գերեզմանատներինը: Սա եզրափակիչ լսումն է, կարծում եմ՝ պետք է երաշխավորել և խնդրել, որ ընկերությունը թույլտվությունը ստանալուց հետո ավելի եռանդուն միջոցներ ձեռնարկի հնարավորինս արագ շահագործման համար:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)

Շնորհակալություն եմ հայտնում բոլորին հանրային քննարկման 4-րդ փուլին մասնակցելու համար: Այս հարցը շատ արդիական է, ինչպես նշեց նաև պարոն Պետրոսյանը: Կառաջարկեի հետագա աշխատանքները իրականացնել՝ համագործակցելով համայնքապետարանի հետ:

<u>Հանրային քննարկման պատասխանատու՝</u>
Կապան համայնքի ղեկավարի տեղակալ _____ **Գ. Թադևոսյան**

<u>Ձեռնարկող՝</u>
«Ռիտուալ» ՍՊԸ տնօրեն _____ **Արման Քոչարյան**

<u>Հանրային քննարկման վարող՝</u>
Կապան համայնքի ղեկավարի տեղակալ _____ **Գ. Թադևոսյան**

<u>Հանրային քննարկման արձանագրող՝</u>
Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջ. մասնագետ _____ **Արմինե Սահակյան**